

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(հացի կիրակի և առի օրերից):

խմբագրութիւնը ընդունում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆՆԵՐՆԵՐ ԵՒ ՔՆՆԱՔԱՆՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Հրատարակում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ստանանք սեփական
ՀՅՈՒՍՊՈՒՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌՄԲԱՍՊԱՍՆԵՐ (Բարձրագույն և Բարձրագույն փոքրիկների ան-
կիւնում, Թամազիսի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՐ ԱՐՄԵՐՈՆԻ

ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պետական ֆինանսները
և ֆինանսների մինիստրի դեկրետով. Նամակ
Երևանից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Եվրոպայից.
Նամակ Պարսկաստանից. Արաբիան լուրեր.—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀՆՈՒՍՊՈՒՆԵՐ.— ԲՈՐՍՍ.— ՊԱ-
ՏԱՍՆԱՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Սարմէ Նորատունկեան.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ԵՒ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻ-
ՆԻՍՏՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Մեր պետական ֆինանսները 1888 թվի նա-
խահաշիւը, և այդ առիթով ֆինանսների մի-
նիստր Վիշնեգորսկու ներկայացրած զեկրետին
մասին, որոնք ներկայումս առանձին ուղարկու-
թիւն են դրուել ոչ թէ միայն Ռուսաստանում,
այլ և արտասահմանի մասուրի և քաղաքական
չըմաններում, «Հիւսիսային գործակալութիւնը»
արդէն հաղորդեց մեզ մի քանի կարճ տեղեկու-
թիւններ, որոնցից երևում է հետևեալը. պետա-
կան սովորական եկամուտները հաշուած են
851,767,628 ռուբլի, սովորական ծախսերը՝
851,242,423 ռուբլի. եկամտի աւելորդը 500,000

ռուբլուց անցնում է. բայց դրանից արտաքոյ
կարգի եկամուտներ հաշուած են 33,724,089 ռ.
իսկ արտաքոյ կարգի ծախսերը՝ 34,250,100 ռ.:
Պետական եկեւեռները նախահաշիւի առիթով ա-
հա թէ ինչ է հետազոտում «Հիւսիսային գործա-
կալութիւնը»: Պետական 1888 թվի եկեւեռների
հրատարակած ցուցակից երևում է, որ եկամտի
աւելումը, ի միջի այլոց, սպասվում է հողային
հարկի շտապանկուց, այլ և առևտրական, խմբա-
ների, ծխախոտի, դրուսագույն թղթերի և երկա-
թուղային տուրքերից: Պէտք է քանան այն եկա-
մուտները, որոնք ստացվում են ձախկնդեղա-
չաքա-
րային արդիւնաբերութիւններից և յետ դնող վճա-
րումներից: Երևանը կաւելանան, ի միջի այլոց,
պետական պարտքերի հատուցման, թոշակների
քանակութիւնը շտապանկուց և ժողովրդական
լուստարութեան գործի վարարեութեամբ: Ձին-
տարական վարչութեան ծխախոտի քաղցած են
իր ամենահարկաւոր զեկրետին մէջ ֆինանսների
մինիստրը յայտնում է, որ 1888 թվի նախահա-
շիւի կազմած ցուցակի եկամուտները մի փոքր ա-
ւելի են, չտրոսով այն անհրեքելի նշանները, ո-
րոնք ցուց են տալիս թէ անտեսական կեանքը
ընդհանրապէս դէպի լաւն է կերպարանափոխ-
ված: Գլխաւոր նշաններն են. խնայողական կա-
սանների աւանդների շտապանկուց, առևտրի կենդա-
նանկուց, որը պարզ կերպով արտայայտվեցաւ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՍԱԼՈՍԷ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Մանուէլի գնալու օրից յետոյ մտա չորս տարի
էր անցել, երբ հորիզոնի վրա երևան է գալի
(կինազա), պ. Նորատունկեանը:
Առօրեայ կեանքը իր մասին և յարատե սր-
հանջներով խափանել էր սրտի բուռն յափշտա-
կութիւնները: Օրն ի բուն մէջ դասից միւս դասն
էի յաճախում. սրտի մէջ խաղաղութիւնը մա-
սամբ տիրել էր. գոնէ ժամանակ չունէի մըր-
մուտներին միտք տալու: Ես այժմ համբերատա-
րութեամբ կարողանում էի լսել այն խօսակցու-
թիւնները, որոնք վերաբերում էին ինձ մարդու
առու հարցին: Մայրս ու Սարգիսն այդ մասին
իմ ներկայութեամբ յաճախակի երկար խորհրդա-
ծութիւններ կանխէին, և իմ սրտին դժուար չէին
զալի այդ զրոյցները, թէ և մարդիկ դուրս բան էր
մարդու գնալը: Նմանաբաններ էլ կը գային մեզ,
բայց հէնց որ մայրս հարցնէր իմ կարծիքը—իս-
կոյն բացասական պատասխան կը ստանար:
—Չեմ իմանում թէ՛ ինչ անեմ, կասէր նա ինձ,
—դու, որ էզպէս մնում ես տանը, քրոջը ճանա-
պարհն էլ կապում ես. նրան էլ խեղճ ես ա-
նում. վրդը կտրում ես: Ախր էդ տեսնումս բան
է, որ ամենին ջուղար էր անում: Ախր, մինչև
էր՝ բոլորումս՝ տանը պլտի մնաւ նստած...
Օ՛հ, Օ՛հ, Օ՛հ, Օ՛հ քու ձեռքից...

—Յար էզա ախր է, կաւելցնէր միւս կողմից
Սարգիսը.— Լիզան էլ մեզը ա... է բալա, զիմնով
ինձ.— աշխարհը էսպէս եկել ա, էսպէս էլ կը
գնայ. քեզպէս աղջիկն էլ որ տանը մնայ նստած,
էլ քու ու քաջալը որ ջուրը պլտի ընկնի: Հէնց
իմանա աշխարհի երևին մէկ հատը էն կտր-
վելու քիճն էր, որ նրա խաթրու համար վրդը
ճուռ տանը մնաւ: Այդ հար, զիմնով մօրս—
Աստուած վկայ, ես ընեմ իմ Յարութիւն աղի
գերեզմանը, որ էզպէս բան չի լինի. չէ, չէ...
Ամենին ա տղան կը լինի—մին անել: Ամենքը, որ
ձեռք քաշեն, յետոյ ինչ դուրս կը գայ: Մենք
մահին ենք՝ մահը մերը. որ, Աստուած մի արաս-
ցէ, գլուխդ մի բան դայ, սրանց էլ հալը ինչ պլ-
տի լինի:
—Ի՛նչ անեմ, յուսահատված կասէր մայրս—
բաս ես ամեն օր ինչ եմ ասում, բաս ամեն օր
ինչ եմ վայ տալի իմ գլուխն ու արևը... Ո՛ւնն ես
ասում... Չեքերս դռն լսալով, սիրտս երբա
ուռումը, որ էսպէս անտակ բաներ չը չինէր
սրանցից... Օ՛հ Օ՛հ Օ՛հ... Մտորովի եմ, Սարգիս
չան, մտորովի. էսա էլի սրանց ուռումը. ոնչ հէր
կը ճանաչեն, ոնչ մէր... գելի զլիկն աւետարան
կարդած ու սրանց խօսք ասած—մէկ ա...
Մէկ օր սրանց խօսքը եկել էր Նորատունկեանի
վրա. Սարգիսն խօսում էր.
—Հա, աղի հարս, էլի մեր դաղիմի աղաթն էր
Աստուածու օրհնածը. աղջիկը ինչ էր, որ կարողա-
նար ասել սրան չեմ չեմ, նրան եմ ուղղում
է՛յ դիտի մի ժամանակը... Սարգիս ջան, սիր, մի
լաւ միտք արա է. Նորատունկեանի էլ լաւ ինչ

Նիժեգորոզկի տօնապահաւում, երկաթուղային
եկամուտների շտապանկուց, ուղղակի հարկերի ա-
ւելի կանոնաւոր ստացվելը, խմբաբանների եկա-
մուտների շտապանկուց և առատ հունձը: Այդ բա-
րեյալող նշանները և փաստերը դեռ ևս իրա-
ւունք չեն տալիս ընդհանուր եզրակացութիւն
դուրս բերելու այն մասին, որ անտեսական գրու-
թիւնը վերջնականապէս լաւացել է. դրա մէջ
դեռ ևս կան շատ մութ կողմեր, որոնք կարող
են վերացվել միմիայն աստիճանաբար, անխնայ
աշխատանքով, խնայողութեամբ, վարչութեան
կանոնաւորութեամբ, և այդպիսի միջոցների
ձեռք առնելով, որոնք կարող լինեն մասամբ
երկրագործութիւնը, առևտուրը և արդիւնաբերու-
թիւնը ճշտող արդիւնները վերացնել և մասամբ
էլ ուղղակի կերպով նպաստել դրանց զարգացմա-
նը: Այնուհետև ամենայնու գործերի աւելի լաւ կեր-
պարանք առնելու նշանները դրականապէս ար-
տայայտվում են, և այդ երևոյթը ֆինանսների
վարչութեանը պարտաւորեցրեց ընդժեշտ աղա-
տել ղէֆիցիտից, որը, պետական վերահսկո-
ղի հաշիւն նախելով, 1888 թվին կազմում էր
51,000,000 ռուբլի, իսկ 1887 թվին՝ 36,000,000
ռուբլի: Ահազին ղէֆիցիտը և ծախսերը, որոնք
առաջ էին եկել մի քանի վարչութիւնների մէջ
ձեռնարկված բարեփոխութիւնների պատճառով,
էնին թոյլ տալիս յոյս ունենալու, որ կարելի կը
լինի նախահաշիւը հաւասարակշռութեան մէջ
դնել՝ միմիայն ծախսերը քաջցնելով. ուստի և
անհրաժեշտ էր հոգալ եկամուտները շտապանկու-
մասին, առանց զեւտելու աղաքանկութեան ար-
դիւնաբեր ոյժերին: Չեք ասած միջոցները
առաջ է շտապանկուց պետական եկամուտները
52,000,000 ռուբլիով, բայց ցուցակի մէջ այդ ա-
ւելացումը սահմանափակված է միայն 30,2 մի-
լիոնով, մասամբ այն պատճառով, որ ձեռք ա-
ռած մի քանի միջոցները տարւայ սկզբից գործ-
նական նշանակութիւն ստանալ չեն կարող, մա-
սամբ էլ այն պատճառով, որ ամեն մի նոր հարկ
դրած ժամանակ, հարկատուութեան ենթարկվող
առարկաների մի մասը, և երբեմն էլ նշանաւոր
մասը դրած են միտում հարկ տալուց, և վերջապէս
այն պատճառով, որ հարկերի շտապանկուց կարող
է քաջցնել համապատասխան առարկաների դոր-
ծածութիւնը:

պլտի լինի. ինքը ափեցրե, լաւ դուռդի տէր,
լաւ օճակի ողոր: Մոլլա Սիմօնը հօ թշնամի չէ
մեզ. նա ճանաչում է Նորատունկեանից, շատ է
զովում. արի, Սարգիս ջան, խօսք տանք. արևիդ
մեռնեմ, չէ մի ասա... Աղջի, վայ, դուրդ ես ա-
սել թէ՛ շան անունը որ ասա, փետը ձեռք վեր
առ. հըրեա Սիմօնը ինքն էլ եկաւ. թող ինքը
ասի:
—Հը, ասաց Սիմօնը, ներս մտնելով և բարեկե-
լով մեզ.—տեսնում եմ աղի աղջկան էլի նեղի
էր. գցել հա: էզպէս է, Սարգիս ջան, էզպէս.
այդք է համաձայնիս. էլ ուրիշ ճար չը կայ.
տղէն հաւանել է. էլ չը պէտք է ուղապնել Նա
ինձ ասեց, որ երէկ չէ՛ մէկ էլ օր գիշերը շտա-
բացնեց տանը խօսել է ինքը Սարգիսին հետ: Հի-
միկուց աղջկեքը իրանք իրանք ձեռքով են դոր-
ծեր տեսնում: էզպէս էլ բան կը լինի: Երի հա,
Թիֆլիսի մոցիբուները ու մեր հանգանները էլ
ասա հացից ու ջրից պլտի ընկնեն էլի...
—Ի՛նչ ես ասում, ընդհատեց Սիմօնի խօսքը Սա-
րգիսին:
—Աստուած վկայ դուրդ եմ ասում. թող ինքը
Սարգիս խօսումը ասի:
—Աղջի, դորդ ա, միաձայն հարցրեցին մայրս
ու Սարգիսն:
—Ի՛նչ է դորդ...
—Եստեղ ես տղի հետ:
—Եստեղ, միթէ առաջին անգամն էք լուռ.
հէնց իմանաւ ձեզ մտա չեմ խօսել նրա հետ:
—Չէ՛ էդ չեմ հարցնում. նշանի վրա բան ին-
սել ես. ղէ՛հ, ջանիդ մեռնեմ, սաս էլի, ինչի ես

ՆԱՄԱՍ ԵՐԵՒԱՆԻՑ

Գեկտեմբերի 28-ին
Ամիս 22-ից երեք օր շարունակ այտոյղ ձիւն
գալով, մօտ կէս արշին ծածկեց թէ քաղաքը և թէ
չըջակաները: Բայց ինչ էք կարծում. երևանցին, որ
այնքան դանդաղուում է փողի սրկութեան պատ-
ճառով, որ այնքան մանուկ դոնը է տալիս քա-
ղաքում բուն դրած տիֆ, դիֆտերիա, ծաղիկ,
կարմրուկ և այլ տարափոխիկ հիւանդութիւննե-
րին, մի մազալի անգամ մտածեց թոյլ տալ իր
նախկին մի քանի շաղկապութիւնները պահպանե-
նել, որոնցից մէկն էլ նոր եկած ձիւնի վրա սահ-
նակով զբօսնելն է.—ոչ: Այն ժամանակ, երբ մի
արհեստաւորի, մանրափաճառի, կամ նոյն իսկ
ծառայողի ընտանիքը թափված է մի խոնաւ սե-
նակի մէջ, ցրտից դողում է, քաղցից լալիս է,
և այս բաւական չէ, ընտանիքում մի քանի երե-
խաներն էլ հիւանդ պառկած են,—այդ տան տէ-
րը ժամերով իր ընկերների հետ գինին սահնա-
կում դրած, շալլ մխտելով, զբօսնելով քէֆ է ա-
նում: Երբ տանը կինը լալիս է, աղաչում է վա-
ւարան, վառելիք, հագուստ կերակուր և վերջա-
պէս դեղ առնել և բժիշկ հարկելը հիւանդներին
առողջացնելու. ամուսինը տրանջում է, թէ փող
չը կայ, գործ չը կայ, քեստ է, իսկ դրսում չը-
ուայլ մխտելով դուռում է դռնից բէլ դիւն ջը,
բէլի դա դարա (աշխարհը հինգ օր է, հինգն
էլ սե), ինչու քէֆ չեմ անի, մեռնող չեմ, էլ ևս
փուչ աշխարհը ո՛վ պէտք է դայ:
Այն ժամանակ երբ հարուստները, կառածա-
տէրերը մեծ մեծ պաշտօն ունեցողները և ահազին
ուճիկներ ստացողները ուրախանում են ձիւնի թու-
լա քուչա գալուն, սահնակի վրա նստած և տաք վե-
րարկուում փաթաթված, շատ անգամ էլ գեղեցիկ
սեւեց մէկին կողքին նստեցրած պտտում են աճ-
բողջ քաղաքը և տանախոցները գրպանից մըր-
սում, մտք մի աղքատի, այտոյղի կոնգ և Շը-
հար կոչված թաղերի յետընկած փողոցների տը-
ները. ահազին ընտանիքներ, երկխաներ թափ-
ված են իրար վրա, մերկ դողում են այդ իսկ
հարուստներին ուրախութիւն պատճառող ցրտե-
րից. հիւանդութիւնը հօ անյուսալի դրութեան
մէջ է գցել այդ թշուառներին: Ի՛նչ օրովեց այդ
զբօսնող հասարակութիւնը մի քանի ժամ մի եր-
կու օր զբօսնելով և սահնակաւորների գրպաննե-

թաքցնում, խնդրում էր մայրս.—Թէ բան կայ,
ասա վերջացուր. մենք էլ զինջանանք:
—Ի՛նչ էք կպել խեղճ աղջկայ ետից,
ձեռ վեր առէք է, միջամտեց Սիմօնը: Ես եկել
եմ Սարգիս խանութից իմանալու թէ՛ հրաման կը
տայ, որ էզուց տղի հետ նշան բերնեք... Աս-
տուած վկայ, էն կանանց մեռնող վկայ, որ յետ
զցելու բան չը կայ. վճեցեք ու պոճի գնայ...
—Սարգիս, Աստուածուց վարանցիլ, դու ընես
քո հօր գերեզմանը, էս անգամ ջուղար գիւ արա,
աղաչում էր այտոյղ մայրս.—էս տղին էլ որ
ձեռից թողնեք, էլ ումը պլտի գնաս: Ախր
խալիը ինչ կասի. չի ասի, որ չը հաւանելին
հէնց ինքն ա, որ ուղքին չի հաւանում: Քուրքը
էլ մեզը ա, հակապիլ է Մինչև Երբ ձեռքերս
խալած պլտի մնամ էսպէս է... Մէկ տէր ունէի,
էն էլ Աստուած գլխիս խից, առաւ ձեռքից ու
թողաւ. ինձ էս սե օրի մէջ, ինչ անեմ. փառք
իրան.—վերջացրեց իր յորհորանքը մայրս, աչքե-
րի արտասուածքը սրբեղով:
—Ախ, չեմ սիրում ես էզպէս բաներ, յարեց
մոլլա Սիմօնը.—էլ լաց ու արտասուածքը ինչ
հարկաւոր բան է: Թէ Աստուած կը սիրէք, թո-
ղէք մեզ մեռնակ Սարգիսին հետ. դուք միւս դուրս
եկէք էն տունը...
—Ի՛ բայան, մեր դաղիմի օրերով էզպէս չէր,
ասաց Սարգիսն սենեակից դուրս գալու պահուն,
—այ Սիմօնը իմանում ա ինձ մեծ աղան ինչ-
պէս մարդու տուեց: Մէկ օր կանչեցին ինձ դա-
լը. տեսնեմ տէրտէր, տիրացուներ, դոնալներ լին
են «Սարգիս, կանչեց մեծ աղան,—այ էս տղին
եմ տալի քեզ...» Բեաղամ կըրողացայ աչքերս

ընդունելով,—և առելի ոչինչ: Գուցէ նա այժմ փոշի մանկ է: Ինչքէն չէր կարելի անել այդ կորած փողի դերով, քանի ընտանիքները հարուստ, վառելիքը հաց և դեղեր չէր կարելի առնել և նրանցն էլ այդ աղքատութիւնից թշուառացածներին ուրախացնել, բայց ո՞վ է մտածում դրա վրայ: Երանցին մտածում է իր և միտքայն իր փորել, հարուստի, դրամաբեր և վայելչութեան վրայ: Նա սիրում, յարգում և օգնում է նրան միայն, որը հարուստ է, լաւ հագնւում է, լաւ հիւրասիրում է, ձուխ հրաւերներ է անում և որից նա կարող է օգտուիլ: Նրա աչքում միայն նա մարդկային արժանաւորութիւններ ունի, ով իրան կը վերադարձնէ իր արած պատիւը և օգնութիւնը, իսկ այն մարդը, որը սրտով ազնիւ է, որը օժտված է առաքելիկ սոսկութեամբներով, բայց ատված է, նա մարդ չէ, նա անարդար է, նրա հետ խօսելը, նրա հետ յարաբերութիւն ունենալը անպատուութիւն է և հետևաբար նրան օգնել, նրան ձեռք կարկանդակ, հարկաւոր չէ: Անա ինչ դրութեան մէջ է Երևանը և հաս ինչից է, որ այժմ շատ աղքատ ընտանիքներ (խօսքս մուրացիկների մասին չէ, նրանք իրանց այդ հեշտ արհեստով շատ արհեստաւորները և վաճառականները շատ են աշխատում, շատ հարուստ են և նոյն արհեստաւորներին փող են տալիս տոկոսով) ստիպված են ամպելով մուրաղ և անզօր լինելով իրանց ձեռքի աշխատանքով ընտանիք պահել, այսօր ամենանեղ և ամենաթշուառ վիճակի մէջ են:

Անա հասան տօները և մեր հարուստների սեղանը առանց մի քանի տեսակ կերակուրների չի դրուի գայ, այն ինչ աղքատը չի ունենայ մի տեսակ անզամ տաք կերակուր: Թող երևանցի հարուստ այս տօներին, շփոթեցէր միմեանց՝ քարոզող—Քրիստոսի ծննդեան և մկրտութեան տարեդարձին, սիրէ և օգնէ իր բարեբախտ աղքատ և խեղճ ընտանիքներին: Մարդուս նպատակը իր անձնական ճոխութիւնը ու հարստութիւնը չը պէտք է լինի միայն, նա պէտք է կարեկցէ այն թշուառ իր նմաններին, որոնք այդ օրերուն էլ մինչև անզամ դրված են տաք կերակուրից: Մեր պայտերը և առհասարակ հին մարդիկ սովորութիւն ունենին այսպիսի տօներին, աղքատ դասակարգին փող բաժանել, հարուստ էին տալիս, կերակուրով էին և այլն, բայց այժմ ոչինչ չը կայ: այն կիսատ պուստ քաղաքակրթութիւնը, այն կիսատ-պուստ դարաշրջանը ճնշեցրել է մեղանում եսակախութիւն, ազգի փառասիրութիւն, աստուածութիւնը դէպք չըբարբառը և շատ ուրիշ վատ յատկութիւններ:

Ժամանակ է, որ Երևանը, ճնշված լինելով փողի կրիզիսի մէջ, մտածէ իր շուկայութիւնները առաջն առնելու և այդ շուկայութիւններից տնտեսած գումարի մի մասը հանելով աղքատ-քրտուր դասակարգին, գոնէ, այսպիսի տօն օրերում մի փոքր օգնելու, նրա թշուառ օրերն էլ մի փոքր

արձարացնել, որ չլինի ուղղում կարողանայի ասել: Ուզեմ չուզեմը հին ա. աքացու տակ շանատակ կաներ... Բնագում մեծը քիսմարդտ էլանք. չէ. Աստուած տայ, որ ամեն մարդ ու կիսիկ մեզ պէս ապրէին... Ախ, անի, քեզանս գուն...

—Գէ՛հ, քեռափառ, հերիք է դա. ինձ համար հիմի սուգ ու շիւան կը բաց անի: Հէնց իմանաս չը գիտեցը թէ՛ չուն ու կատուի պէս կապրէիք: —Ը՛, հողում ջուռ սուլա զուլսը, բերանս բաց մի արա, թէ՛ չէ դիտեա...

—Մեղա քեզ Աստուած, գլխիցս ուզը ըլլի է... վայ, վայ էս քեռափառների ձեռից, հողոց քաշից Սիմօնը, երբ ես ու նա մենակ մնացինք սենեակումը:—Աղբառս պիտի խառնէր էս պատաս չունը, է...

Սենեակումը, ասեցի, մնացինք ես ու Սիմօնը: —Մալումէ խանում, ասեց նա ինձ,—էլ ինչ երկարացնենք. տեսնում ես, որ մէրդ էլ էր բանը շատ ցանկանում է... Ասած է՛ չպատուեա գճայր ջո և դմայր ջո>... Ուրիմն՝ էրպէս՝ ասէք—հան և վերջ տանք գործին. հան, հարցնում էր Սիմօնը: —Չը գիտեմ, ինչ ասեմ...

—Ե՛հ, որ չը գիտեք՝ ուրեմն՝ ձեր մօր խօսքը պիտի կատարեք. նա էլ մեղք է, Աստուած վկայ: Ես էլ, Մալումէ խանում, ձեր մարդ եմ, ձեր օջախի աղ ու հացը կերել եմ. ձեզ թշնամի չեմ. ձեր լաւութիւնը կուզեմ: Ես ձեզ խորհուրդ եմ տալի Նորատուճկովին գնալ: Արթ մինչև երբ էրպէս պիտի մնաք. Աստուած վկայ, ես ընեմ էն աղ ու հացը, որ ձեր տանը կարել եմ,—իմ

ուրախացնելու համար:

Եւ իրաւ այսպիսի մի դժբաղդութեան ժամանակ, ինչպէս է Չէյթունի, որի համար ամեն տեղ, նոյն իսկ գիւղերում փողեր են հաւաքվում և ուղարկվում զէյթունցիներին օգնելու, կրկնում ենք, այդ իսկ ժամանակ ամօթ չէ միթէ Երևանին, որ մի կօպէկ էլ չէ ուղում նուիրել թշուառ զէյթունցիներին օգնելու համար:

Վերջացնելով մեր յօդուածը, շնորհաւորում ենք երևանցիներին 1888 տարին և ցանկանում թուրք և հայ հասարակութիւններին փոխադարձ սէր, փառաբանի դուռնայի ձայնաւորների, վարչութեան անդամների և քաղաքապետի նոր ընտրութեան մէջ ոչ կուսակցական ոգի, այլ բարեխիղճ ընտրութիւն. Գայանեան օր. դարձցի հոգաբարձուների և տեսչի խառնակութիւնների դադարումն և բարի վերջաւորութիւն, նոր եկեղեցու աւարտումն, ետանդ դէպի հասարակական գործեր, իսկ վաճառականներին՝ երկրի առատ բերք և յաջող արտահանութիւն, որի հետևանքն է շրջանառութիւնը և առևտրի կենդանութիւն:

ՏՊ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Սարգիսիմ, 27 դեկտեմբերի

Բացի այսօրվայ հեռագրիս ձեր լրագրին՝ խնդրեմ տեղ տալ և ներկայ նամակիս «Մշակի» յետագայ համարում:

Ես ողջ եմ և ամենևին ցանկութիւն չունեմ «Մշակի» 145 համարի Սարգիսիմից լրատուի խաթան վախճանելու: Սակայն կարող եմ մասամբ փոխել նորա, լրատուի, վիշտն իմ կենդանութեան պատճառով. եթէ այդ պարտը կը հաստատէ իմ մինչև դեկտեմբերի 8 զեղված հարստութիւնը, թող վերջինս նորան լինի. չեմ ասում հասարակական հիմնարկութեանց լինի, որովհետև վերջիններս այնքան ազնիւ պիտի լինեն, որ չը ցանկանան ուժ և իցէ մասն իրանց միջոցները առկայեցնելու համար: Հասարակական բարեգործութեան դէպի ինձ պահանջը ներկայ դէպքում պարտ է շնորհակալութեամբ բաւականանալ իմ ի բոլոր սրտէ նուիրած յօդու Չէյթունի հրիւրելոց 25 բուրջով, որ իսկապէս իմ նիւթական միջոցները՝ վեր է և համապատասխան առելի իմ մտաւոր և բարոյական հարստութեան, քան նիւթական:

«Անգութ» սարի աղբիւրից Սարգիսիմը ջրանցը անցկացնելու միտքը խելագարների բաժին թողնելով՝ ես բաւականանում եմ իմ կոչման առելի համապատասխան գործով, այն է «Անգութ» սարից անխիղճ արկեսաց աղբիւրները կարելով դատաստանական և այլ պատշտական միջոցներով, որոնք ես գործադրել եմ դեկտեմբերի 8-ից առաջ: Արքունի հաշուով ղեկավար լինել շատ դուր

ին է. ես ինձ բաժին եմ ընտրել փոքր ինչ զժուրադրոյն սկզբունքը, այն է սուրբ աւետարանի օրէնքը. «տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»:

Սօղանդուի առաջնակարգ անատաւագետ՝ Սարգիս Տէր-Մկրտչեան Տէր-Սարգսեանց:

ՆՆՐԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեղ գրում են ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ հետեւեալը: «Ինչպէս յայտնի է ձեզ, շուտով հրատարակվելու է Պետերբուրգում «Մուկէս խորհնացու» պատմութիւնը, որ գրաբարից թարգմանել է աշխարհաբար լեզուով հայր խորէն Ստեփանէ: Վերջապէս հայերս կունենանք աշխարհաբար լեզուով թարգմանած մեր երեւելի պատմագրի հեղինակութիւնը: Յանկալի է որ այդ զերբը շատ տարածվի մեր ընթերցասէր հասարակութեան մէջ»:

Պ. Ստեփաննոս Լալայեան ԲԱԳՈՒՆՅ նուիրել է «Մշակի» 2 օրինակ բարեգործական նպատակով, որոնցից մէկը Պետերբուրգի Անտառային դպրոցի հայ ուսանողներին:

«Աղբիւրի» խմբագիրը ինչպէս է մեզ յայտնել հետեւեալը. «Մեր ամառային ներկայ 1888 թւի առաջին սրէմիսն «Մոգրի» երկրպագութեան պատկերի օրինակները սպառված լինելով, կրկին պատուիրեցինք նոյն պատկերները փարիզում Ալժմ խմբում ենք որ այդ պատկերները հասել են արդէն Օդէսա, սակայն տօները պատճառով մաքսատան և դրաքննութեան օրինակները գործողութիւններին ենթարկելու պատճառով նշանակված ժամանակից երկու շաբաթ ուշ պիտի հասնեն թիֆլիս, որպէս զի ուղարկվին մեր յարկելի բաժանորդներին»:

Մեղ գրում են ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ հետեւեալը: «Գրականական-դրամատիական ընկերութեան դահլիճում դեկտեմբերի 26-ին տեղի ունեցաւ հայկական երեկոյթը: Երեկոյթը բաղկացած էր ներկայացումից, կենդանի պատկերներից և անխուսափելի լեզվիկայից, իսկ անտրակտների ժամանակ օրկեսալը անում էր մեր երաժիշտ-կոմպոզիտոր Վորդանեսիցի հեղինակութիւնը: Խաղում էին Սահարեանցի վարչիւլը «Գլխիկայ սարբը» եւ, որը անցաւ շատ անդրոյն կերպով այդ կարելի է վերագրել նրան, որ պ. պ. ուսանողները ընտրել էին մի այնպիսի խօսքով, որի մէջ չը կար զլիաւարճ՝ Քրասնոպոլսի վոգելիների կենդանութիւնը: Ներկայացումից յետոյ դրվեցան կենդանի պատկերներ հայկական կեանքից: Հէնց առաջին պատկերից այդ վերին աստիճանի աշխուժած պատկերները դրակցին հասարակութեան ուշը: Քանի գնում էր այնքան մեծանում էր հասարակութեան ոգեւորութիւնը, իսկ երրորդ

պատկերի ժամանակ թատրոնը թնդում էր ոգեւորված բուռն ծափահարութիւններից: Շնորհակալ պիտի լինել և պ. Շահամեանից, որը կենդանի պատկերների ժամանակ երգում էր մի խումբ երիտասարդների հետ զանազան աղջային երգեր: Ամբողջ հասարակութիւնը հիացած էր նրա դեղեցիկ, դուրեղ բարիտօնից: Մի քանի անգամ կրկնել տուին Վորդանեսիցի «Վայթիւն» Գլխիկայ ժամը 3-ին բոլորը ցրուեցին շատ գոհ երեկոյթից: Միայն կասան այնպիսի տեղ էին ընտրել, որ շատերը խոյս էին տալիս տոմսակ գնելուց: Թատրոնը մտնելու ժամանակ տոմսակներ ոչ ոք չէր պահանջում. առհասարակ կոնսորթը թույլ էր կարգադրիչները չէին օգնում հասարակութեանը իրանց տեղը որոնելու և մարդիկ ստիպված էին այս ու այն կողմն ընկնելու իրանց տեղերը գտնելու համար:

Պօլից մեղ ուղարկված է «Ղոյս և Ստուեր» վերնագրով մի զրբոյի, որ պարունակում է իր մէջ քանից ասելի ոտանաւորներ, հեղինակութիւն Մկրտչ Աճէմեանի: Այդ չքեղ կերպով սպաղարված զրբոյի մէջ պարունակված բանաստեղծութիւններից մի քանիսի բովանդակութիւնը բաւական աշուղտ է. մի քանիսի մէջ հեղինակը արտայայտում է դրացունքը, բայց տարաբարբար համարեա բոլորն էլ գրված են այնպիսի լեզուով, և դարձուածներով, որ տպաւորութիւնը բոլորովին թուլանում է, և մտքի ու զգացմանը փոխարէն ընթերցողի յիշողութեան մէջ մնում են միայն բառեր և դարձուածներ:

ՆԵՐՍԻՍԻՅ մեր թղթակիցը հաղորդում է մեզ որ մտադրութեան կայ Երևանի առաջնորդարանին կից մի հին սահրակ եկեղեցի քանդել և նրա տեղը մի ուսումնարան շինել՝ քահանայացուներ պատրաստելու համար: Թղթակիցը աւելացնում է այդ լուրին հետեւեալը: «Չարմաւալ է, թէ ինչ միտք ունի հատկին ծախսեր անել այդ շինութեան համար և նոր ուսուցիչներ վարձել. միթէ ասելի լաւ չէր լինի այդ գողը, որ պիտի գործըրի նոր շինութեան վրայ, յատկապէս բաղաբուս արդէն մի եղած ուսումնարանի, հէնց թեմական դպրոցին, նրա մի բաժանմունքը յատկացնելով քահանայացուներ պատրաստելուն, նոյն իսկ թեմական դպրոցի տեսչի հսկողութեան տակ»:

Յունվարի 6-ին, դեղեցիկ կզանակի շնորհով, Քրիստոսի մկրտութեան տօնը թէ հայերի և թէ ուղղափառ հասարակութեան կողմից՝ թիֆլիսում կատարվեցաւ մեծ հանդիսով: Քաղաքի աղքատակուցեան նշանաւոր մասը ներկայ էր կրօնական այդ մեծ արարողութեան:

Պ. Միքայէ Սիմօնեանց ԲԱԳՈՒՆՅ նուիրել է

Ես է. ամեն բան ես ասեցի ու պրծայ. հիմի քո կամբիցն է կախված կամ հան առել, կամ չէ առել...

—Ես Նորատուճկովի դէմ ոչինչ չունեմ, միայն թէ նրան այնքան չեմ ճանաչում, որ կարողանայի կեանքս միանգամից կապել նրա կեանքի հետ: Չը գիտեմ, ճշմարտ, ինչ ասեմ:

—Սալումէ խանում, Աստուած վկայ շատ լաւ օջախի տղայ է. մի ժամանակով կէս Ա. նրանցն էր. ինչ քարվաստարանի կուզես, ինչ տներ կուզես... յետոյ ողբումս ճողին ընկա... Բայց ինչ թաքցնեմ, եթէ մի պակասութիւն ունի Նորատուճկովի, էր նրա տաք ընտրութեան է. կրակ է խտակ... Մի բան էլ ասեմ. հանդարտ տղա-մարդիցն էլ ինչ քեռաբազ. գրք չաժի. Աստուած վկայ էրպէս է: Բայց հունարով տղայ է. առանց հացի չի մնալ Տեա, մի օր, երբ կավալերիակից պոլիտը դուրով անելիս է եղել, իր նաչախիկին ու ուր ա կ ասել: Քչեցին էն տեղից, բայց հիմի տես թէ տանօծումը ամենքը նրա արեով կրգում են ուսում. օրեսիկները հօ սասանում են նրանից: Օրեսիկներին երես տալ կը լինի. նրանց որ երես տաս, հէնց էն սաճաթը կօտարաբանը քնիքների տակից կը փայտցնեն: Հետո էլ ուր ենք գնում. պատմում էլի... Մի անձրնոտ գիշեր խաբար էր դալի թէ էս ինչ ճանապարհով կօտարաբանիկստաները սպրանք են բերելու: Սա աւելում է իր հետը վեց հողի օրեսիկի ու գիշերվայ կէսին ճանապարհ ընկնում: Գրեզմանի պէս մուտ գիշեր է լինում. անձրեւ էլ հօ գալիս է ու գալիս: Քիչ թէ շատ, Աստուած գիտէ, բայց որ

մի բաւական ճանապարհ անցնում են, Նորատուճկովի իր ձին առաջ է քշում, շուտ է գալի օրեսիկները դէմ ու դէմ թէ՛ ՏՕՅԻ! Թվանքները, տեսում է դարդիէք տեսնեմ... Չարթ, չարթ, չարթ... թվանքները չեն բացվում է՛րպէս, ասում է,—դաւաղների ձեռից սպրանք պիտի խըլէք: Առնում է դաւիչին ու ընկնում էս խեղճ օրեսիկները ջանքին, դուր դու պատուիրեցէր՝ տալիս է ու տալիս... Գէ՛հ, ասում է, հիմի թվանքները չարացրէք ու աչքներդ լուսի պէս պահեցէք, որ անձրեկը չը թագանան, թէ չէ ոչգիկները կառնեմ: Այ քեզ ինչպէս մարդ է: Ասել եմ, էլի կասեմ, որ անգլին տղայ է: Ես նրա դալի դուլ ընտրութեան էլ, որ պակասի, կանցնի, մարդավարի մարդ կը դառնայ, քո արեւը: Արի, Սալումէ խանում, ձեռք ձեռքի խիկեր ու վերջացնեք էս բանը. արի խի պիտի չսպէս տղին ձեռքից թողնենք: Согласны, что-ли?!

—Вотъ, пристали, право!

—Որիտալ միտալ չեմ իմանում. պիտի համաձայնվես:

—Եթէ չէք իմանում, էլ ինձանից ինչու էք հարցնում:

—Աղջի ուրեմն էրպէս. չը հարցնեմ էլի... Գե՛հ բաս Աստուած շնորհաւոր անի, բաղաւոր ըլնէ... Հարսի, այ հարսի, եկէք... Սարթթօ, արի... Աչքերդ լուս Տեանք. էլի ես. բարաքեալա Սիմօն: Սարթթօ ջան. քեզ հետ Սալումէ խանումը հարսանիքին էլ լաւ տ. տն կի եալլի պիտի տանք հան, լաւ միտք պահի...

(Վը շարունակվի)

«Մշակի» մի տարեկան օրինակ իր ծննդավայր Մոզդոկ քաղաքի հայոց արական դպրոցին:

Վաղը, կիրակի օր, յունվարի 10-ին, թիֆլիսի ժողովարանի դահլիճում, յօգուտ Հայուհեաց բարեգործական ընկերության տեղի կոնսերտայ պարահանդեսի միջոցով հետ միասին: Միջոցին է երեկոյան 9 ժամին:

Յունվարի 7-ին, դրամատիկական թատրոնում, ուսուցիչ զերատանական խումբը ներկայացրեց Պլավի «Մեր բարեկամ Նեկիլեմ» վերնագրով կոմեդիան: Եթէ մինչև անգամ ընդունենք, որ Պլավի այդ կոմեդիան էլ բեմական և դրամատիկական մի քանի պակասություններ և թույլ կողմեր ունի, բայց այնու ամենայնիստ այդ պիեսան կարողանում է ապագուրով թողնել հասարակության վրա, կարողանում է շարժել այժման ստանդարտ հասարակության հետաքրքրությունը: Պիեսայի այդ գլխավոր յակարկները կայանում է նրանում, որ հեղինակը բնի է դուրս բերում շրջապատող հասարակության ներկայ կենսի մի քանի տղեղ կողմերը, այդ կենսի մեջ մեծ գործեր կատարող մի քանի ժամանակակից հերոսներով: Բնի վրա հանգեցնելով բոլոր տիպերը ծանոթ են ուշադիր հանդիսականին. դուք տեսնում էք ձեր առաջ մի արտաբնական շատ համակերպի և առաջադեմ մարդ, որը բանկի կասիր է, և որը տարիներ ընթացքում կողոպտելով բանկի կասան, և այդպիսով հարկավոր ընտանիքի թշուառություն պատճառ դառնալով, վարում է ամենաշուշան կենսը, սրտում է սիրունիներ, կատարել կերպով թուղթ է խաղում, և փողով կարողանում է գնել իր շրջապատող հասարակության համակարգը և շողջորթությունը: Գուրք տեսնում էք ձեր առաջ մի խուճուրդ շրջանիկ կրիստապարներ, որոնք ոչինչ բանի մասին չեն մտածում, բայց եթէ հաջովի, խմել և թթև պալ անհպատակ կերպով, դուք ձեր աչքը առաջ տեսնում էք փողոցային մամուլի ամենազգուրդի ներկայացուցիչը, որը առաջին մինչև երեկոյ շողջորթում և ստորանում է, և փողի համար ոտի տակ է տալիս ամեն տեսակ համոզմունք: Վերջապես դուք տեսնում էք, թէ ինչպես դեղեցիկ հագուստներով տակ և շքեղ կարիներով տեսնում կատարվում են ամենակեղտոտ դործեր, և երբ այդ բոլորի ծանր ապստոսություն տակ դուք յիշում էք հասարակությունը, դուք աչքի էք վրդովում, որովհետև բնի վրա դուրս բերած անձանց կենսանկարները կան հասարակության մեջ...

Թիֆլիսի քաղաքային վարչությունը հրատարակել է հետևեալ տակաւ թիֆլիսի վաճառանոցում ծախվող հացի և մսի վրա, սկսած յունվարի 1-ից մինչև 1-ը փետրվարի: Արուսեակա ալիբից թխած հացի ֆունտը 5 կոպ., ցորենի ալիբից, առաջին տեսակի, ֆունտը 3 կոպ., երկրորդ տեսակի 2 1/2 կ., թանրի մեջ ցորենի ալիբից թխած հացի ֆունտը առաջին տեսակի 5 կ., երկրորդ 3 1/2 կոպ., երրորդ 3 կոպ.: Արուսեակա և ցորենի ալիբից խառն լաւահացերը առաջին տեսակի 5 կ., երկրորդ 4 կոպեի: Ցաւարի մսի ֆունտը առաջին տեսակի 8 կոպ., երկրորդ 7 կոպ., սուլի 14 կ., ոչխարի մսի ֆունտը 8 կ., խոզի 7 և 6 կ.:

«Մշակի» խմբագրությունը մեջ եղած 318 ր. 40 կ. դրամը յօգուտ Զէյթունի հրկիզանների, երէկ յանձնեցինք սրբազան առաջնորդին: Գրանից առաջ նոյն նպատակով առաջնորդին մեր յանձնած 163 րուբլի դրամը հաշվելով, մենք ընդամենը յանձնած ենք ուրեմն 481 ր. 40 կ.:

Վաղը, յունվարի 10-ին, ժամը 12-ին, թիֆլիսի քաղաքային Արհեստաւորաց դպրոցում լինելու է տարեկան ակա:

Տեղական «Новое Обозрение» լրագիրը լսել է, որ շուշեցի մի կաճառական, որ մտադրություն ունի ձեր վաճառել արտասահմանում, նորերումս ուղարկել է խառվա 17 ձի Վարապաղի տեսակից, սրտնից իւրաքանչիւրը տեղում արժէր 200—400 րուբլի: Թէ որքան է այդպիսի մեր երկրի համար այդ նոր ձեռնարկությունը, — առ այժմ յայտնի չէ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՎ ԵՅՅԱՐԻՍՅԵՑ

Մտնորէ, 22 դեկտեմբերի

Գուրք լրագրիչներին արդէն իմացած կը լինէր թէ ներկայ ձմեռը սաստիկ խիտ է Եւրոպայում և 1870 թիւց յետոյ ոչ որ Եւրոպայում չէ յիշում այնպիսի խիտ ձմեռ, ինչպէս այս տարվայ ձմեռը: Ձեր ընթերցողներին սուրբ հետաքրքիր կը լինի աւելի մանրամասն տեղեկութիւններ ունենալ Եւրոպայում այժմ տիրող այդ տարօրինակ ձմեռնային եղանակի մասին:

Այն հիւրանոցը, որտեղ ես կհնում եմ, ստանում է բազմաթիւ լրագրիչներ ամեն լեզուներով, և ես այդ լրագրիչներից քաղեցի հետևեալ տեղեկությունները Եւրոպայում տիրող ցրտի մասին, որ և հաղորդում եմ «Մշակի» ընթերցողներին:

Շվեյցարիայի Գրառքիչին կանտոնի էնզաղի բարձրագույն դպրոցը ձիւնը ծածկել է մի մետր բարձրութեամբ և դեկտեմբերի 17-ին ցուրտը հասել էր 25 աստիճանի (Քեմպերի): Նոյնպէս ցուրտ էր Գոթարդի վրա: Գալուստ ցուրտը հասել էր 21 աստիճանի, Յիւրիլում 18 աստ., Բադենում 16, Բեռնում 14, Ղօզանում 13, իսկ Մոնթրէլի մեջ 8 աստիճանի, որ չեղած բան է այդ բարեխառն տեղում: Նշանաւորն այն է, որ նոյն օրը Մոնթրէլում, արեղակի ձառագայթների տակ ջերմաստիճանը ցոյց էր տալիս 24 աստիճան տաքութիւն:

Խուսիսայի մայրաքաղաքում, Հոսում, նոյնպէս ցուրտ է, մինչդեռ Տիբը գետը ափերից դուրս գալով հեղեղում է քաղաքի մի մասը, տանելով կամուրջներ և մեծ մեծաներ հասցնելով ընկալիչներին: Վինցիայում ձիւնը տեղում է անդադար, Արիւսիան ծովը վրա սաստիկ մրրիկներ են լինում: Ցուրտի քաղաքում ցուրտը հասնում է 8 աստիճանի, Պեդարոյում 3 աստիճանի և Ղիւրիսոյում զրօն: Բոլոնիայի փողոցները ձիւնից առնանցիկ են, ձիւնը կը կարծրանա վրա քաղաքում և Բոլոնիայից մինչև Յլորենցիա տանող երկաթուղու վրա երթևեկությունը քանի մի ժամ շարունակ դադարել էր ձիւնի կոտորի պատճառով: Գեկտեմբերի 11-ին Բոլոնիա քաղաքը մնաց առանց փոստայի: Վաճառականները մեծ կորուստներ ունեցան, չը կարողանալով յմնդնելու օտի օրը պատրաստած իրեղենները քաղաքը հասցնելու և վաճառելու: Ուսուցիչները ծախվում էին առաւելելիքան դնելով: Լոնդրոն գաւառում ձիւնը արգելում էր հեռագրական կանոնաւոր հաղորդակցութեան: Պարմայի գաւառի շատ գիւղեր իսպառ ծածկված էին ձիւնի թանձր քօլով, նոյն իսկ Պարմայում սաստիկ փոթորիկ պատճառ և փողոցները անանցելի էին:

Ցուրտը զգալի է Տիրանիայում, մինչև անգամ հարաւային Ֆրանսիայում գտնված Նիցցա քաղաքը, որտեղ սովորաբար թթալստով հիւանդները իրանց ապաստանն են դառնում: Ծածկված է ձիւնով և ցուրտը այդտեղ 4 աստիճանի է հասնում: Եւ որովհետև ցուրտը և ձիւնը Նիցցայի համար շատ հաղադարա երեկոյներ են (ձիւնը այդտեղ վերջին անգամ եկել էր դեկտեմբերի 11-ին 1870 թիւի), ուստի լուսանկարները շտապում են այժմ հանել Նիցցայի այլ և այլ տեսարանները: ձիւնով ծածկված: Լուսանկարները այդ տեսակ վարմունքի դէմ բողոքում են թէ լրագրիչները և թէ մանաւանդ պանդուկատերերը, վախենալով թէ մի զուցէ օտարները, տեսնելով Նիցցայի, այդ դրախտանման տաք երկրի, ձիւնի սպիտակ սաւանով ծածկված տեսարանները, — միանգամայն դադարեն Նիցցա յաճախելուց...

Սլոնիայի Բարցելօնա գաւառում ցուրտը այս տարի հասել էր 25 աստիճանի. ձիւնը ծածկել էր երկիրը: Նոյն իսկ Մադրիդում 8 աստիճան ցուրտ էր անում և Սլոնիայի մայրաքաղաքի հասարակությունը սահմաօրէնները հազած՝ զուարճանում էր ստանալ զետի և լճակների վրա:

Վերջապէս Շվեյցարիայում այս ձմեռը ցուրտը հասնում է 31 աստիճանի: Եւ այն մի և նոյն ժամանակ մենք ձեզ նախանձում ենք անդադար կարճելով «Մշակի» մեջ, որ ձեր Անդրկովկասում այս տարի դրեթէ ամենին ձմեռ դեռ ես չէ եղել:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԵՑ

Մարտոսար, 10 դեկտեմբերի

Սարգուստում գտնվում են 9 հողի ուսուսպատակ հայեր և մի պարսկահայտակ հայ, որոնք պարսկում են վաճառականութեամբ: Այդ վաճառականութիւնը զլիւստրապէս կայանում է նրանում, որ Ռուսաստանից բերելով մեծ քանակութեամբ մանուֆակտուրային ապրանք՝ երկաթ, շաքար, աւազ և այլ ապրանքներ, իսկ այստեղից առնելով բուրդ, բամբակ, ֆրիզոն, մազեղէն և ամենայն տեսակ չոր մրգեղէն, ճանապարհում են երկիրներ: Յուսարին այն է, որ այստեղի հայերը միմեանց հետ սարսափելի թշնամի են և ամեն բովէ աշխատում են միմեանց միասին: Գրա հետևանքը այն է, որ այս հիմնական օրէնքներից զուրկ պետութեան մեջ թուրքերը օգուտ քաղելով հայկական անմիաբանութիւնից, իրանց գրգռանքներն են լցնում դրանց գումարները: Թիֆլիսցի, աղուցի, դարաբաղի և թավրիցի հայ փողատերերը ուղարկում են գործակաւորներ և իրանց յանձնում են հարկը հազար լուբլու գործեր և պատուիրում են ապրանքներ առնել: Այդ գործակաւորներն էլ այստեղ գալով, աշխատանք անելու ենթադրութեամբ, սկսում են փողերը բաժանել ամբողջ Սրբասանի նահանգում և մինչև Հէյրաթ են հասցնում փողը թուրք կոմիսիօնների միջոցով ոչ թէ բուրդ է ձեռք բերում վաճառականը, այլ այնպիսի սարանք, որը ոչինչ բանի պէտք չը գալով, ահազին մնա է տալիս վաճառականներին: Եւ քանի տարի է արդէն, որ շարունակվում է այս անկանոն գործողութիւնը:

Բայց ամենազլիւստը արգելքը այն է, որ այստեղ բուրդ առնել և մաքրելը մեծ ներթիւն է: Բուրդը լաւ մաքրելու համար ահա 10 տարի է, որ հայերը թուրք կանանց են բանեցնում թուրք ամբոնի իսկապէս ընդդէմ է այդ բանին, առարկելով թէ քրիստոնեաները տե ս ս ու մ են իրանց կանանց երեսը: Այս առիթով շատ անախորժ դէպքեր են տեղի ունեցել. բայց և այնպէս թուրք կանայք բանում են, որովհետև սարսափելի աղքատ ու թուրք են, որովհետև սարսափելի աղքատ են, իրանց պատիւը պաշտպանելու համար վճարելն չը բանեցնել թուրք կանանց: Այդ միջոցում կանայք զիմում են մեծ հողերականին, որ բացակայ էր քաղաքից, և ազգում որ թոյլ տայ իրանց բանելու, և աշխատէ խաղաղեցնել երկու կողմն էլ. սա էլ իրզատով թոյլ է տալիս, միայն հայերը չը բանեցրին մինչև հարցի պարզվելը: Սրանից քանի օր առաջ մի մայր և աղջիկ հաց են տանում իրանց մարդու և կողոր համար, բարվանաարան, առաւօտեան ժամը 10-ին: Այդ բանը տեսնում են պարսիկները, և ահազին աղմուկ են բարձրացնում, թէ կանայք դնացել են քարվանսարան... Մի քանի հողի դնում են դատարարի գանդատովում, թէ հայերի քարվանսարանում թուրքի կանայք են դէնացել: Գատարանը կանչել տալով կնոյ և աղջկան, քննութիւն է անում. քննութիւնից երևում է, որ այդ կանայք հաց են տարել, որ հայերը խառն չեն այդ բանի մեջ, ուրեմն բողոքը զրպարտութիւն է:

Բայց պարսիկ ամբոնի գրգռումը չէ հանգստանում. գաղտաւոր ամբոնի հանգստացնելու համար, աղջկան և մորը քաղաքից հեռացնում է, բայց դրանով էլ չէ վերջանում գործը. ամբողջ գրաւոր կերպով յայտնում է տեղական կրօնական պետին, և թողտուրթիւն է խնդրում հայերին կոտորելու և նրանց ունեցածը թալանելու: Ամբոնի այդ կատաղի միջոցներում իսկապէս սարսափ էր տիրում և մի քանի հողի հայ վաճառականների դրուկութիւնը անտանելի էր: Արօնական պետը արդեւք է դնում այդ բանին, և պատասխանում է, որ եթէ այդ երկու կանանց վերաբերութեամբ որ և իցէ կասկածելի բան են նկատել, ինչու իսկոյն նրանց չեն սպանել. նրա կարծիքով այդ մի անտեղի զրպարտութիւն է, քանի որ պարսիկ տղամարդից աւելի պարսիկ կինն է ատելութեամբ վերաբերվում դէպի քրիս-

տոնան: Ինչ և իցէ, այդ ատելի կասկածների շարժով յարուցված մղեւանը և կատաղի դրուկութեանը չեն խաղաղվել և դեռ էլի հայ վաճառականների դրուկութեան աննախանձելի է: Ահա թէ ինչ դրուկութեան մեջ են օտար երկիրները գաղթող վաճառականները, հայերը, ի հարկէ, ուրիշ օգնութիւն չը գտնելով, խնդրելով դիմել են թէհրանի ուսուց հիւպատոսին: Հետևանքը իր ժամանակին կը հաղորդենք մանրամասնաբար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսից հեռագրում են, որ Բուրգասի մեջ Չերնօգորիայի ապստամբների խմբերի երևալը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ցոյց, որը կաղմակերպել են բուրգասական կառավարիչները, Եւրոպայի ցոյց տալու համար, թէ Արևելեան-Բուսկիայի ազգայնականութիւնը հաւատարմ է Կօրուզեան պրինցին:

—Անդլիական բանը, ինչպէս հեռագրում են Լօնդօնից, ինչեցից ղեկավարը 4-ից մինչև 3 1/2 օր: —Բէլգրադից գրում են, որ նախկին մինիստր-նախագահ Ռիտիչ ինքն խորհուրդ է տալիս ընդդիմադրականներին չափաւոր լինել, քաղաքական այս յուզմունքների միջոցին գործերը աւելի չը բարդելու համար:

—Թիւրքաց մինիստրութիւնը վերջին օրերում, ինչպէս հաղորդում են Կ. Պօլսից, յատկապէս զբաղված է բուրգասական հարցով:

—«National Zeitung» լրագիրը, որ համարեա միշտ ընդդէմ է եղել Կօրուզեան պրինցի բուրգասական իշխան լինելուն, այժմ հաղորդում է, որ իբր թէ պետութիւնների մեջ համաձայնութիւն է կայացել Կօրուզեան պրինցի հեռացնելու մասին, և իբր թէ պէտք է առաջարկել բուրգասական ազգին՝ իրանց համար ուղղափառ դաւանութեան պատկանող մի նոր իշխան ընտրելու:

—Լօնդօնից եկած հեռագրիչներից երևում է, որ լօրք Չերչիլ ձանապարհորդելով Ռուսաստանում, հաղորդել է Լօնդօն, որ ուսուց կառավարութիւնը խաղաղասիրական քաղաքականութեան է հետևում:

—Բերլինից գրում են, որ դերմանական կառավարութիւնը յանձն է առնում բուրգասական հարցը լուծելու գործի նախաձեռնութիւնը:

—Պեդարից գրում են, որ այնտեղ այս օրերս ձերբակալվեցաւ մի շատ նշանաւոր օտարերկրացի անձնաւորութիւն, որը մեղադրվում է քաղաքական պրօպագանդա անելու մեջ:

—Բուրգասական կառավարութեան կարգադրութեամբ, բուրգասական նախկին քաղաքական գործիչ և այժմ ընդդիմադրական կարակալով ընաւարանում խիտ հետախուզութիւն արին:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սլոնիայի կառավարութիւնը առաջարկեց Միացեալ-Նահանգների կառավարութեանը տօնել Ամերիկայի գտնելու 400 ամակը, դրա հետ միասին Սլոնիայի մտադիր է փառաւոր արձան կանգնեցնել Ամերիկայի անմահ գտնողի՝ Քրիստափոր Կոլումբոսի յիշատակին:

Յայտնի է, որ զանազան տարախոսիկ հիւանդութիւնների տարածվելուն շատ են նպաստում նոյն իսկ առողջ մարդիկ, որոնք այցելում են տարախոսիկ հիւանդութիւններով վարակված հիւանդներին: Այդ բանի առաջն առնելու համար Լօնդօնի հիւանդանոցում սկսեցին գործածել հեռախօսը (տելեֆօն), և հեռախօսի միջոցով ամին մի մարդ կարողանում է մանրամասն տեղեկութիւններ ստանալ իր ցանկացած հիւանդի մասին, հեռախօսի միջոցով խօսակցել նոյն իսկ այդ հիւանդի հետ, փոխանակ անձամբ նորա մօտ գալու, որի պատճառով շատ անգամ առողջ այցելուն ինքն վարակվում է վրտանագաւոր հիւանդութիւններով:

Կամենալով արդեւք դնել իրանց ամուսնիների արեցողութեանը և անխնայ կերպով փողով վատնելուն զանազան գարեջրատներում, ընտանաւորներում և սրճարաններում, անգլիացի կանայք նորերումս ներքին գործերի մինիստրին ներկայացրին մի խնդրագիր, որով խնդրում են կիրակի օրերը, այսինքն երբ աշխատող դասակարգը ազատ է, փակել բոլոր սրճարանները, գարեջրատները և այլ այդպիսի տեղերը: Այդ խնդրագրին ստորագրել են մինչև մի միլիօն կանայք:

Ֆրանսիական առևտրի մինիստրութիւնը 50 հազար ֆրանկ է խոստանում այն մարդուն, որը կը հնարի մի պարզ և հեշտ գործադրող գործիչ:

որով կարելի լինի իմանալ թէ արդեօր զինին, սպիրտը, կամ ուրիշ աղբյուրի խմիչքները կն դժ- ված են թէ ոչ:

Զերնօգործայի մի քանի կողմերում սովոր սաստկանում է կառավարութիւնը կարգադրել է հաց մատակարարել սովորաբար չենք, որոնց օր- տին արդէն երեք զանազան կողմերում հանդա- նակութիւն էլ է բացված:

Թիւրքաց սուլթանը վճռել է փակել տալ Պօլսի թիւրքաց թատրոնը, ասելով որ թատրոնն է վը- չացնում մահմեդականների բարը ու վարքը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿՆԵՐ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՆԱԿԻՆ, 4 յունվարի: Բեյխտաղին ներկայա- գրած է քոջիւղիւնների վերաբերեալ օրինակներ: Այդ օրինակներ մէջ սօցիալիստներին Գերմանիա- յից արտաբերու միտքը պատճառարաններով է նրա- նով, որ այժմեան օրէնքներին հիման վրա հետագ- վող անձինք սովորաբար իրանց պրօպագանդան վերանորոգում են իրանց բնակութեան նոր տե- ղում, այլ և նրանով, որ այն անձինք, որոնք հեղբուն են պետութեան գոյութեան իրաւունքը, չեն կարող պահանջել, որ իրանց համարեն իրի պետութեան պատանդները: Հայրենիքի սահման- ներից արտաբերեալ տեղի կունենայ միայն այն դէպ- քում, երբ դատարանը այդ բանը օրինական կը համարի:

ՓԱՐԻՋ, 5 յունվարի: Ժողովը 265 ձայններով առա- լելութեամբ ընդդէմ 178-ի արտայայտեց իր վստա- հովութիւնը զէպի մինիստրութիւնը: Նոյն ժողովում վիճարկութիւններ եղան նախագահական ձգնա- ժամի միջոցին ֆարլից մուսիցիպալիտետի խորհը- ղի բռնած դիմել վերաբերութեամբ Պատգամա- ւորներից մէկը մատնանել արեց այն բանի վրա, որ այդ խորհուրդը փորձեց քաղաքական զեր խաղալ և ճնշում գործել պարլամենտի վրա, նոյն իսկ սպառնալիքներ դիմելով: Ներքին գործերի մինիստրը պատասխանեց, որ այդ մեղադրանքը մասամբ արդարացի է, բայց որ խորհրդի մեծա- մասնութիւնը երբեք չէ մտածել կունենայ վերա- կանդման մասին. յամենայն դէպս կառավարու- թիւնը կարող կը լինի ստիպել, որ օրէնքը յարդ- վի:

ՊԵՏԵՐՅՈՒՆ, 5 յունվարի: Իբրև պատասխան նոր տարվայ առիթով արտայայտած չնորհաւո- րութիւնները, Մոսկովայի զենիտալ-նահանգապետի անունով տուած Բարձրագոյն հրովարտակի մէջ հաստատ յոյս է յայտնուում, որ կատարութիւնը, որով օրհնում է մեզ նախախնամութիւնը, թոյլ կը տայ թէ այս տարի և թէ ապագայ տարիներ- ում պետութեան և նրա հաւատարմի որոշեց բո- լոր այժմը ուղղելու զէպի ներքին բարգաւաճման գործը:

ԲՆԱԿԻՆ, 5 յունվարի: Իբր պատասխան նոր տարվայ առիթով արտայայտած չնորհաւորութիւն- ների չկարմիր խաչի ընկերութեան անունով տը- ւած վիճելով կայսրի հրովարտակի մէջ այն յոյսն է յայտնված, որ Գերմանիայի բարեկեցութեան հա- մար դեռ շատ ուշ կը համի այն րօպէն, երբ ընկերութիւնը կը ձեռնարկի իր ուղղակի պար- տաւորութեան գործարկութեանը:

ԲՆԱԿԻՆ, 6 յունվարի: «National Zeitung» լը- րագիրը ասում է, որ Մոսկովայի զենիտալ-նահան- դապետի անունով արված Բարձրագոյն հրովար- տակի մէջ արտայայտած խաղաղասիրական մըտ- քերը բարեկեցիկ ապաւորութիւն գործեցին լրա- գրի խօսքերին նայելով, այն փորձերը, որոնք ձգտում են սարսափեցնել հասարակական միտքը զբռնող լուրերով ներկայումս այլ են նրան այն- ջան հեշտ ենթադրվող չեն գտնի:

ՎԻԵՆԱ, 6 յունվարի: «Fremdenblatt» լրագրին գրում է, որ խաղաղութեան վերաբերութեամբ ուսուցչ կայսրի հրովարտակի մէջ արտայայտած յոյսը միանգամայն համապատասխանում է ամեն անդ տիրապետող ցանկութեան, որպէս զի խա- ղաղութիւնը պաշտպանված լինի: Զէ կարելի է հարկէ, հեղբու և այն, որ չը նայած գործ դրվող ըստի ջանքերին, ամենքի վրա ծանրացող ան- հանգստութիւնը, և ապագայի գրութեան վերա- բերեալ կասկածները դեռ ևս չեն ոչնչանում:

ՎԻԵՆԱ, 6 յունվարի: «Fremdenblatt» լրագրի խօսքերին նայելով, կարելի ենք զննել զննող ըստի արդարական հարցով: Նոյնպէս և վերջին օրերում ոչ մի կողմից ոչինչ առաջարկութիւն չէ եղել, և առհասարակ ոչինչ առիթ չէ եղել այդ հարցի մասին կարծիքների փոխանակութիւն անելու:

ՎԻԵՆԱ, 7 յունվարի: «Politische Corresp.» լրագիրը հաղորդում է, որ շուտով Տիասա կը պատասխանի Գեյզիի հարցին միջազգային բա- ղաբանութեան մասին այն մտքով թէ իրերի դրութիւնը շատ հանդամանքներում չէ փոխվել, թէ ոչ մի կերպով չէ կարելի հաստատել, որ ան- հանգստ լինելու հիմք կայ, և թէ չը պէտք է հաստատել չափազանցում և զրկող լուրերին:

ՖԻԼԻՊՊՈՍ, 7 յունվարի: Օթիցներէն և ու- տիկանական պաշտօնեաների մէջ այստեղ պատա- հած արհեստիչ կուր պատճառով, Կորսթրեանս պրինցի պատեղ զարը յետաձգված է:

ՍՕՖԻԱ, 7 յունվարի: Պատերազմական միջիս- տրը հրամայեց զինարարութիւններին համար կանչել երկու ամսով վերջին պիւրտագրութեան ժամանակ ցուցակագրված այն անձանց, որոնք որոշված թիւից դուրս են մնացել, որպէս զի զը-

բանցից հարկաւոր ժամանակը կաղմկի պահեստի ղօրը:

ԼՕՆՊՈՆ, 7 յունվարի: Անգլիական բանկը ի- ջեցրեց գիսվեցաւ 3 1/2-ից մինչև 30/0:

ՊԵՏԵՐՅՈՒՆ, 8 յունվարի: Բաղուի նահանգա- պետ զենիտալ-մայր բարձր Գիրմ հիւանդութեան պատճառով արձակված է ժուռայութիւնից զենե- րալ-էլէանանտի աստիճանով «Гражданин» հաղորդում է, որ կովկասյան նահանգը շինելու համար կաղմկված ընկերութեան կանոնադրութե- նը Բարձրագոյն հաստատութիւն ստացաւ: Նոյն լրագիրը հաղորդում է, որ շուտով պետական խորհրդին կը ներկայացվի մի նախագիծ, որ վը- րաբերում է երկաթուղիների ծառայողների հա- մար առանձին թոշակային և նպատող կատա- ների հիմնարկութեան ընդհանուր պարտաւորե- ցուցիչ հիմնարկներին: «Новости» հաղորդում է, որ ներկայումս է արտասահման ուղարկվող կը- րուսիային բեռներից ակցիլը չը վըրցնել Բաղուի մէջ, այլ ուղարկել ազատ մինչև առաջաներին պահ տալը, այդ պատճառով էլ նախարար կը լը- նի մարտահարկ դնել և այն կէրտինի վրա, որ դործ է ամուսն կովկասի տեղական ազգաբնակ- թիւնը: Բացի դրանց կերպիւնային այն բեռնե- րից, որոնք արանդիտով արտասահման են ու- ղարկվում Ռուսաստանի միջով ակցիլի վըրա- դարձնելու ժամանակ կորուստը որոշված է 40/0 իսկ Բաղուից Բաթում ուղարկվող բեռների հա- մար—11 1/2/0:

ԲՕՄԲԵՅ, 8 յունվարի: Աղանայի էմիրը հա- սաւ Զէլալ-Ազադ: Եմիրը տուեց իր որդուն պե- տական սուրբ և այդպիսով իր ժառանգ հրատա- րակեց նրան:

Ս. ՊԵՏԵՐՅՈՒՆԻ ԲՕՄԲԵՅ ԾՆՈՎԱՐԻ 4-ԻՆ

Ռուսաց 1 բուլլ լօնքանի վրա արվել	2027/32	պէնս.
— — — — —	1763/4	պֆ.
— — — — —	2201/2	ամս
Ռ. կի — — — — —	9	> 15
Մարտային կուսովներ	183	> 50
Արձային — — — — —	1	> 34
Բորսային դիվիդենդներ	57/8	> 70
Պետակ. բանկ. 5% տուո 1-ին շրջանի	99	> 75
— — — — —	2-րդ	> 98
— — — — —	3-րդ	> 97
— — — — —	4-րդ	> 87
— — — — —	5-րդ	> 98
— — — — —	6-րդ	> —
Նոր 4% փոխառութիւն	82	> 50
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	98	> —
— — — — —	2-րդ	> 97
— — — — —	3-րդ	> 97
Ներքին 5% առաջին փոխառութ.	268	> 75
— — — — —	երկրորդ	> 250
5 1/2% ընէտա	103	> —
Ռսկիայ ընէտա	194	> 75
Նօթիկետող կոմսոլիտած փոխառու- թիւն	164	> 75
Նոր երկաթուղային ընէտա	98	> 25
5% գրուական թղթի կալուած.	164	> —
— — — — —	2-րդ	> 97
— — — — —	3-րդ	> 97
5 1/2% գրուական թղթի խորհրդի խորհրդի կալուած բանկի	99	> 75
6% գրուական թղթ. խորհրդի կալ. բան.	101	> 87
— — — — —	Պօլստալայի	> 101
— — — — —	Պետ. հաւաք.	> 101
— — — — —	Կիւրդի	> 102
— — — — —	Մոսկովայի	> 101
— — — — —	Բեսարաբ. Տայլը.	> 101
— — — — —	Նիթ. Սամար.	> 101
— — — — —	Վիլնայի	> —
— — — — —	Թիֆլիսի—27 և 43 տ.	> —
— — — — —	Բուխարայի—18 և 43 տ.	> —
Վ. օլիգո-կամակի բանկի ակցիաները	715	> —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	266	> —
Բիբիան-Վ. օլիգոլի ընկ.	87	> 50
Ս. Պետերբուրգի քաղաքային օրիւ- ղացիաներ	94	> 62
Մոսկովայի քաղաք. օրիւլագիաներ	94	> 25
Սիզիւայի — — — — —	94	> —
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ.	—	> —
Ս. Պետերբուրգի բորսայի արամագրութիւնը հանդարտ է	—	> —

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ՄՕՍԿՎԱ. Яковъ Макаровичъ Бартапетовъ. Գուր գրվելով «Մշակին» շատ անորոշ կերպով էք զրկ ձեր հարցին: Խնդրում եմ որոշ զրեցէք փողօցի անունը և ասան տիրոջ ազգանունը, կթէ ոչ չենք կարող ուղարկել ձեզ լրագիրը:

ԲԱԹՈՒՄԻ. Մ. Մ. Չեր յայտարարութիւնը կը տպենը: Չեր պայմանի համաձայն ենք:

ԹԻՖԼԻՍ. «Անտորոնական գրավաճառանոցին» Բաթումից նամակ ունենք պ. Ա. Մ—ից որ զրա- վաճառանոցից պիտի ստանանք «Մշակի» երկու բաժնանորդի վճար: Բարեհաճեցէք հասցնել մեզ:

ԹԻՖԼԻՍ. Կարագետ Արզումանեանց. Դապրե- ժից մեզ տեղեկացնում են որ ձերանոց ստանա- րու ենք «Մշակի» երկու բաժնանորդի վճարը. բարեհաճեցէք հասցնել մեզ:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԿՈՐԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՄՆԻՍՆՈՑ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆՑԻ (Կուկիա, Վօրօնցօյի արձանի հանդէպ) Հիւանդանոցի ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ՐՈՒԳՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երկխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻԶԿ ԻՍՍԷԱԿԵԱՆՑ 11—12 ժ. կանանց և երկխայոց ց.
ԲԷՆԿԵԼՎՍԿԻ—11—12 ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և ստամոնքի ց.
Ա. ԳՈՒՐԿՈ—12—1 ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երկխայոց ց. ամեն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԿՈՆԵՐԸ
ԶԱԵՎՍԿԻ—5—7 ժ. Չղպին ց. և էլէկտրօ-տերապիա.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին և երկխայոց ց.
Հիւանդանոցում է մասն կա բարձուհի Մօզեր:
Վճար—50 կ: Համարորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ: Մշտա- կան անկողիններ.
Հիւանդանոցի փոխ-վերահստուչ ՐՈՒԳՎՈՎՍԿԻ

ՄԻ ԵՐԻՏԱՍՍԱՐԳ, լաւ կրթութիւն ստացած, 26 տարեկան (լուծերական դաւանութեան), որը հիմնաւորապէս գիտէ գրապահութիւնը, հաշւապահութիւնը, երկրագործութիւնը, նոյնպէս և ուսուցչ, լեհական և գերմանական լեզուները, մասամբ և ֆրանսիականը, որոնում է իր համար քարտուղարի, հաշւապահի, կամ սրա նման մի պաշտօն: Նամակները խնդրում են ուղղել անմիջապէս Թիֆլիս, «ՄՇԱԿԻ» խմբա- գրութեանը: 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գի- տութիւն ընդհանրութեան, որ ջրանցքի կնիծ մարկաների գործածութեան առաջին անգամ համար, վարչութիւնը անօրինակ է ջրանցքից ջուր բաց չը թողնել, կթէ ջուր աւելորդ առաջարկում է նախօրոք զբոյժից կտրած մարկան, և այդ պատճառով նրանք, որոնք ջանկանում են ջուր վըրցնել մարկաներով ամեն անգամ պէտք է առա- ջարկին ջրավաճառի մարկաների զբոյժը, որից մարկաները պէտք է կտրվեալ ջրավա- ճառների ներկայութեամբ, համապատասխան վըրցնվող ջրի քանակութեան: 1—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԵՐԿՈՆԻ ՏՈՒՆ
մէկը Դալիդիօսկայա փողոցի վրա, № 27, միւսը Կուկիայում, Ալէքսանդրօվսկայա փո- ղոց, № 10: Գնի մասին պէտք է իմանալ Ալէքսանդրօվսկայա փողոցի վրա, տանտիրո- ջից: 1—3

SEZONЪ САРПИНОКЪ 1888 ГОДА.
Съ 15 декабря 1887 года поступить въ продажу сарпинка саратовская, ручного ткачества, собственной выработки.
Продажа штуками и аршинами. Пересылка во всё города Россійской Имперіи и за-границу.
ОБРАЗЦЫ НОВЪЙШИХЪ РИСУНКОВЪ
Съ пѣнами и условиями пересылки будутъ высылаться 1 декабря одни и тѣ же въ двухъ видахъ: въ альбомѣ за 35 к. и въ конвертѣ за 21 к. почтовыми марками.
Адресъ: Саратовъ, «Товариществу промышленниковъ сарпинскихъ издѣлій».
(10 և 30 ր.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի 21-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգեխառը, նաւա- պետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից զէպի Տրայպոլցօն, Օրդուս, Սամսօն, Կօ Պօլսի և Մարսէյն: Տեղեկութիւնների մասին պէտք է գիտնել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմօլլուի տան, Նաբերէճնայա, և Թիֆլիսում պ. Բէոսին, նախկին Արժուրճի գալլիբեում, № 103.
1—4

ՊԵՏԵՐՅՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ ԿՈՂՄԵՑ ԹՈՅԼՏԻՌՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱՍ
ՀՆԳԿԱԿԱՆ ՄԿՆԵՐԸ

ՄԻՇՈՒՆԱՅ
ВЪРНАЯ СМЕРТЬ
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի 21-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգեխառը, նաւա- պետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից զէպի Տրայպոլցօն, Օրդուս, Սամսօն, Կօ Պօլսի և Մարսէյն: Տեղեկութիւնների մասին պէտք է գիտնել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմօլլուի տան, Նաբերէճնայա, և Թիֆլիսում պ. Բէոսին, նախկին Արժուրճի գալլիբեում, № 103.
1—4